

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.04.2016 10:23



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էր երկօրյա վերապատրաստման դասընթաց «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ» թեմայով: Դասընթացը վարել է տ.գ.թ., դոցենտ Դանիել Ջհանգիրյանը: Դասընթացի ընթացքում մասնակիցները քննարկել են սուտը բացահայտելու կարողությունների տեսական և տարածված եղանակները: Անդրադարձել են գրուցակցի վստահությունը նվաճելու հմտություններին, դրանց կիրառման յուրահատկություններին: Դասընթացավարը մանրամասնել է գրուցակցի վրա ներազդելու հմտությունների փորձված ձևերը, ինչպես նաև՝ հույզերը կառավարելու հմտություններ ձեռք բերելու օպտիմալ ժամանակահատվածը: Վերապատրաստման մասնակիցները, ներկայացնելով պրակտիկայում արդեն իսկ օրինաչափ դարձած որոշ դեպքեր, կարևորել են փաստաբանի աշխատանքում բանակցություններ վարելու կարողությունները, ինչի շուրջ ծավալվել է գիտագործնական գրույց:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```